

ՌՈՒՍ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԶԱԳԱՆՔՆԵՐԸ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Բանալի բառեր – Ռուս-ճապոնական պատերազմ, խաղաղություն, հակամարտություն, մամուլ, հասարակական կարծիք, արտաքին քաղաքականություն:

ՄՈՒՏՔ

1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմը հենց սկզբից գրավել է հետազոտողների ուշադրությունը: Այնուամենայնիվ, հակամարտության բոլոր հնարավոր կողմերից առավել «բախտավոր» էր ռազմական և քաղաքական իրադարձությունների ուսումնասիրությունը, իսկ հասարակության գիտակցության վրա դրա ազդեցության խնդիրը մնում էր գիտական վերլուծության ծայրամասում¹: Միննույն ժամանակ, հասարակական մտքի ուսումնասիրությունը, ռուս-ճապոնական պատերազմի ժամանակաշրջանի հասարակական կարծիքի, հրապարակախոսական մտքի վերլուծությունը թույլ է տալիս ավելի խորը և լիարժեք հասկանալ ռազմական գործողությունների անցկացման առանձնահատկությունները և դրա արդյունքները², պատերազմի ընթացքում զանգվածային գիտակցության վերափոխումը, երկրում առկա ճգնաժամային իրավիճակի վերաճումը մասշտաբային հեղափոխություն:

Պետք է փաստել, որ պատերազմի հետևանքով առաջացած խնդիրներն ու պատերազմի շուրջ հյուսված թեմաները զբաղեցնում էին հասարակության ուշադրությունը³: Տվյալ ժամանակաշրջանի կովկասյան հասարակական միջավայրի և գիտակցության վրա ազդող հիմնական միջոցներից շոշափելին հանրային մամուլն էր, որը հնարավորություն է տալիս յուրօրինակ գտման ենթարկել պատերազմով, հակամարտությամբ պայմանավորված հասարակական ընկալման այն ասպեկտները, որոնք սովորաբար շրջանցվում են հետազոտողների կողմից: Հասարակության տեղեկացվածությունն ու պատերազմի էմոցիոնալ ընկալման առանձնահատ-

¹ **Шушкевич Ю. А.**, Восточный шанс. Русско-японская война 1904-1905 гг. в ретроспективе исторического выбора. М., 2005.

² **Волковский Н. Л.**, История информационных войн: в 2 ч. Ч. 2. СПб., 2003. с. 670.

³ **Жукова Л. В.**, Формирование «образа врага» в русско-японской войне 1904–1905 гг. // Воен.-ист. антропология: ежегод. 2003/2004: Новые науч. направления. М., 2005. с. 261–263.

կությունները հնարավորություն են տալիս բացահայտել պատերազմի (նաև հասարակական ինքնապաշտպանության) գիտակցումը:

Պատերազմի հանդեպ տրամադրությունները տարբեր կերպ էին արտահայտվում նաև հայ հասարակության մեջ և, ինչպես նշում է ակադեմիկոս Հր. Միմոնյանը՝ «ռուսահայերի մեծ մասը, հատկապես պահպանողական և ազատական շերտերը, ռուսական բանակների պարտություններն ընկալում էին խոր ցավով: Դա միանգամայն բնական ցանկություն էր, քանզի կովկասահայությունը, չնայած ցարիզմի՝ քսան տարուց ավելի տևող հայահալած քաղաքականությանը, շարունակում էր ամուրկապված մնալ Ռուսաստանին, կրել նրա տնտեսության և մշակույթի բարերար ազդեցությունը»¹:

1904 - 1905 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ԴՐԱ ՄԿՁԲԻ ՄԱՍԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

Մինչպատերազմական քաղաքական զարգացումները, ռուս-ճապոնական պատերազմի ընթացքը, ռազմական գործողություններին վերաբերող թեմաները լայնորեն ներկայացվում էին արևելահայ իրականության ներքին մամուլում, հատկապես լավագույնս լուսաբանված են «Մուրճ» ամսագրի համարներում²:

«Մուրճ» ամսագրի հոդվածագիրը անդրադառնալով Հեռավոր Արևելքում ռազմաքաղաքական զարգացումներին, մատնանշում է, որ ի տարբերություն Մերձավոր Արևելքի, «այլ տեսակի է Հեռավոր Արևելքում ծագած բարդութեան բնատրոթիւնը: Այնքան կարճ միջոցում երոպա-

¹ **Միմոնյան Հր.**, Ազատագրական պայքարի ուղիներում, Գիրք 1-ին, Երևան, «Հայագիտակ» հրատ., 2003, էջ 13:

² **Մուրադյան Լ.**, Գրական քննադատությունը «Մուրճ» ամսագրում, Պատմաբանասիրական հանդես, 1982, N 3(85), էջ 85: *«Մուրճ» ամսագիրը հայ մամուլի այն նշանակալի երևույթներից է, որոնք մեծ ազդեցություն են ունեցել ժամանակի հասարակական կյանքում: Ամսագիրը սկսել է հրատարակվել 1889 թվականից և շարունակվել մինչև 1907 թվականը: Նրա առաջին խմբագիր-հրատարակիչ Ավետիք Արասխանյանն իր բազմազան հետաքրքրություններին համապատասխան մշակել էր ամսագրի գործունեության «հանրածրագիր» նախագիծը, որը և իրականացրել էր հետևողականորեն՝ նպատակ ունենալով մամուլի միջոցով նպաստել ազգային առաջադիմության: Եվ իսկապես, ամսագրի հրատակությունը կարևոր փուլ դարձավ հայ հրապարակախոսության և գրական-տեսական մտքի զարգացման ընթացքում: Ավետիք Արասխանյանի բնորոշմամբ, ամսագիրը «անկող չէր, այլ կոչված էր ժամանակի և հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի կողմից»: (Արասխանյանց Ավ., «Մուրճ» ամսագիրը որպես հասարակական օրգան, «Մուրճ», 1889, N 1.):*

կան ամենառաջնակարգ երկրների ամբողջ էվոլյուցիան անցած Եապոնեան իր մեջ զգում է այժմ այնքան պատրաստութեան և ոյժ, որ խիզախում է արգելք դնել վիթխարի Ռուսաստանի տարերային առաջխաղացութեան Հեռաւոր Արևելքում: Ռուսաստանը իրականապէս գրաւել է Մանջուրիան, այժմ այդ երկրի և Կորեայի սահմանագիծ կազմող Եալուզետի կորէական հողի վրայ ամրութիւններ է կառուցանում և առհասարակ ձգտում է Կորեան ենթարկել իր ազդեցութեան: Իսկ թէ Մանջուրիայում և թէ մանաւանդ Կորեայում եապոնացիները ահագին տնտեսական շահեր ունեն. չը պետք է մոռանալ, որ չին-եապոնական պատերազմից յետո Եապոնեան ուզում էր նոյնիսկ գրավել Կորեան և յետ կացաւ այդ մտադրութիւնից եւրոպական երեք պետութիւնների – Ռուսաստանի, Ֆրանսիայի և Գերմանիայի ստիպմամբ»¹:

<<Մուրճ>> ամսագիրը, որն ուշադրությամբ էր հետևում հեռավորարևելյան իրադարձություններին որոշ տեղեկություններ է հաղորդում ռուս-ճապոնական հարաբերությունների լարման և նախապատերազմական գործընթացների մասին: Մասնավորապէս նշվում է՝ «դեկտեմբերի 8-ին (1903) Եապոնիայի արտաքին գործոց մինիստր Կոմորան յանձնեց ռուսաց դեսպան Բարոն Ռոզենին եապոնական նոտան: Անգլիական թերթերի ասելով այդ նոտան ունի մօտաւորապէս հետևեալ բովանդակութիւնը՝ Կորեայի նկատմամբ Եապոնիան չի կարող թոյլ տալ թէ Եապոնիայի ապահովութեան և թէ այլ քաղաքական նկատառումներով, ինչպէս և եապոնական առևտրի և արդիւնագործութեան շահերի գերակշռութեան տեսակէտով»²: Անդրադառնալով ճապոնիայի մանջուրական քաղաքականության կարևորությանը՝ հողվածագիրը նշում է, որ «զալով Մանջուրիային Եապոնիան անկարող է համբերել, որ Ռուսաստանը մշտապէս գրաւի այդ երկիրը և վտանգի մշտական սպառնալիք դառնա Եապոնիայի ամենակենսական և օրինական շահերին Կորեայում... Եապոնիան աւելի քան մի այլ պետութիւն ստիպուած է պահպանել Չինաստանի անկախությունը»³: Միննույն ժամանակ, հրապարակախոսը անդրադառնալով Ռուսաստանի Հեռավոր Արևելքի քաղաքականությանը, այն համարում էր անհիմն ագրեսիվ և կործանարար: Նրան հատկապէս անհանգստացնում էր ռուս-ճապոնական պատերազմի հավանականությունը, որ «մինչ այս երկու հակառակորդները լարում են իրենց ամբողջ ոյժը և արագ պա-

¹ «Մուրճ». Քաղաքական, հասարակական, գրական ամսագիր, 1903, N 10, էջ 228-229:

² Նույն տեղում, 1903, N 12, էջ 209:

³ Նույն տեղում:

տաստում պատերազմի համար, Հեռուոր Արևելքի ջրերն են ուղարկում և անգլիական գրահատրներ»¹:

Հերթական տեսության մեջ հոդվածագիրը համառորեն նախագուշացնում էր կառավարությանը «գոռոզ հարևաններին» դաս տալու գայթակղությունից, քանի որ «պատերազմի տեսք ստացած միջազգային դասերը, ցավոք, հատուկ հատկություն ունեն՝ հավասարապես վնասել երկու կողմերին»: Միևնույն ժամանակ, նա փաստորեն մեղադրում է Տոկիոյին Պետերբուրգին միակողմանի զիջումներ պարտադրելու մեջ՝ միևնույն ժամանակ ընդունելով ռուսական կողմի հայտնի դիվանագիտական սխալներն ու բացթողումները: Մեր կարծիքով, «Մուրճ»-ն այդ ժամանակ բավականաչափ քննադատաբար չէր մոտենում Ռուսաստանի հեռավորարևելյան քաղաքականությանը: Օրինակ՝ վստահություն չէր տաժում Կորեայում ռուսական կոնցեսիոն գործունեության մասին արտասահմանյան զեկույցներին՝ համոզելով ընթերցողներին, որ կառավարությունը Հեռավոր Արևելքի հետ կապված տարածքային ընդհարձական մտադրություններ չունի. «Կայսերական կառավարությունը կը սպասէ անցքերի զարգացման եւ հէնց առաջին անհրաժեշտութեան դէպքում ամենակտրական միջոցներ ձեռք կառնէ իր իրաւունքները եւ շահերը պաշտպանելու համար Հեռուոր Արևելքում»²:

Ռուս-ճապոնական պատերազմի մեկնարկի մասին լուրը «Մուրճ»-ն ընդունեց հետևյալ բնորոշմամբ. «Պատերազմը գրաւել է պետութեան, հասարակութեան և մամուլի ամբողջ ուշադրութիւնը: Հեռուոր արևելքում իր գերիշխող դիրքը զինուած ձեռքով պահպանելու համար ռուսաց պետութիւնը գտնում է իր բոլոր հպատակների կողմից ոգևորուած աջակցութիւն... Բնականաբար պատերազմի շնորհիւ երկրորդական կարգ են անցնում երկրի ներքին կեանքի հարցերը, զանազան վերանորոգումների ծրագրները»³:

Պատերազմի սկզբում «Մուրճ»-ը վստահ էր Ռուսաստանի վերջնական հաջողության մեջ («Ճապոնիայի հետ մենամարտութեան մեջ Ռուսաստանը վստահ է իր կարողութեան»), չնայած խոստովանեց առաջիկա արշավի տևողությունը և դժվարությունը, «այլ պետութիւնների միջամտութիւնները»⁴:

Հատկապես հիշատակելի է Ամենայն Հայոց կաթողիկոսի հեռագիրը Նիկոլայ Երկրորդ կայսրին, որում հայտնում էր իր և իր հոտի անկեղծ

¹ Նույն տեղում:

² «Մուրճ». Քաղաքական, հասարակական, գրական ամսագիր, 1904, N 1, էջ 233:

³ Նույն տեղում, 1904, N 2, էջ 208-209:

⁴ Նույն տեղում, էջ 209:

զգացումները՝ մինևույն ժամանակ զեկուցելով, որ Էջմիածնի ամբողջ միաբանությունը հանդիսավորությամբ մաղթանք կատարեց «ռուսաց փառաւոր զօրքին յաղթութիւն ուղարկելու համար»¹:

Հոդվածագիր Լ. Սարգսյանն անդրադառնալով միջազգային իրադրության և պատերազմական զարգացումներին՝ նշում է, որ այն բուռն հետաքրքրությունը, որով աշխարհի բոլոր ծայրերում առաջացել է ներկա պատերազմով, բացատրվում է ոչ միայն ժամանակակից հաղորդակցությունների դյուրությամբ, մարդկության մշակութային ավելի բարձր աստիճանով և ժողովրդի բոլոր խավերը թափանցող մամուլի հզոր դիրքով, այլև նրանով, որ «Հեռաւոր Արևելքում իրար են խառնում մեծ պետութիւնների բազմազան շահեր և դեղին րասայի անկախ գոյութեան օրհասական հարցն է շօշափուած ներկայ ընդհարումով»²: Ինչ վերաբերում է միջազգային իրադրությանը՝ «մեծ պետութիւնները ամեն կերպ աշխատում են կղզիացնել պատերազմը որոշ վայրով և թոյլ չտալ երկու հակառակորդների մենամարտութեան մէջ մի երրորդի միջամտութիւնը»³:

1904 թվականի փետրվարի 21-ին ճապոնական զորքերը գրավեցին Փենյանը, ապրիլի վերջին դուրս եկան Յալու գետ, որով անցնում էր Կորեա-չինական սահմանը:

Փետրվարի 24-ին ճապոնացիները փորձեցին Պորտ-Արթուրի մուտքի մոտ խորտակել 5 հին ուղևորանավեր, որպեսզի փակեն ռուսական էսկադրան ծովախորշում: Բայց պլանը տապալվեց «Ռետվիզիան» ռազմանավի կողմից, որը դեռևս գտնվում է ծովախորշից դուրս: Մարտի 2-ին Վերինիուսի նավատորմը հրաման ստացավ վերադառնալ Բալթիկա, չնայած Ս.Օ.Մակարովի բողոքներին, որը գտնում էր, որ նավատորմը պետք է օգնության հասնի Հեռավոր Արևելքին: 1904 թվականի մարտի 8-ին Պորտ-Արթուր ժամանեց ծովակալ Մակարովը և հայտնի նավաշինարար Ե.Կուտեյնիկովը: Հաջորդող իրադարձությունների մասին «Մուրճը» գրում է. «Նաւահանգստում «Պետրոպաւովսկ»-ն ընկնում է ճապոնական ականի վրայ և սարսափելի պայթիւնից յետոյ 2 րոպէում խորտակւում ու ջրասոյգ լինում, իր հետ տանելով ալիքների տակ հոչակաւոր ծովակալին

¹ Նույն տեղում: *Հոդվածագիրն այնուհետև շարունակում է. «Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը շրջաբերական հեռագրով պատուիրել է բոլոր թեմակալ առաջնորդներին, որ Ռուսաստանի բոլոր հայ եկեղեցիներում մաղթանքներ կատարուեն պատերազմի աջող ելքի համար: «Прав. Вест.» հաղորդում է, որ Թագաւոր Կայսրը ստանալով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ամենահպատակ զգացմունքներ արտայայտող հեռագիրն իր և հօտի կողմից՝ բարեհաճեց Սեփական ձեռքով մակագրել. «Անկեղծօրէն շնորհակալ եմ Կաթողիկոսից եւ իր հօտից»:*

² «Մուրճ». Քաղաքական, հասարակական, գրական ամսագիր, 1904, N 2, էջ 219:

³ Նույն տեղում:

իր շտաբի և գրահակրի մարդկանց մեծ մասով: Չոհվում է և հոչակաւոր ռուս նկարիչ Վերեշչագինը: Մարտի 31-ի աղետալի կորուստը ցնցեց ամբողջ աշխարհը»¹: Այնուամենայնիվ խորին համոզմունք էր հայտնվում, որ, ի վերջո, Ռուսաստանը և Ճապոնիան ստիպված կլինեն վերականգնել բարեկամական հարաբերությունները, որոնք հավասարապես կարևոր են երկու պետությունների համար. «Ռուսաստանը չէ ուզում պատերազմ. նա արել էր, հնարաւորութեան սահմաններում ամեն բան, որպէսզի խաղաղ ճանապարհով լուծուեն Հեռաւոր Արևելքում ծագած բարդութիւնները, բայց Ճապոնիայի դաւադրական յարձակումից յետոյ, որ ոչ մի խաղաղ միջնորդութիւն չէ կարող աջողութիւն ունենալ: Այդպէս ուրեմն միջամտութեան բոլոր չի հասել, և մեր առաջ են դեռնս արեւլի սարսափելի արիւնահեղութիւններ»²:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՌՈՒՍ-ՃԱՎՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ «ՄՈՒՐՃ»-Ի ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

1904-ի գարնանը հասան բանակի ու նավատորմի լուրջ հետընթացների և մեծ կորուստների մասին առաջին հաղորդագրությունները: Վերլուծելով դրանց պատճառները, «Մուրճի»-ի հեղինակն առաջին հերթին ուշադրություն հրավիրեց հրամանատարության տակտիկական կոպիտ սխալների վրա, որոնք առանցքային տարածքներում փոքր ուժերով փորձում էին դիմակայել թշնամուն: «Ցզենչժուի մոտ կռիւը պատերազմական արուեստի պատմութեան մէջ պիտի դարագլուխ կազմի: Այստեղ հանդիպեցին իրար արժանի երկու հակառակորդներ՝ պաշտպանուողների հերոսութիւնը հաւասարում էր յարձակուողների արհամարհանքին դէպի մահը»³:

1904-ի հուլիսին «Մուրճ»-ը կողմ էր արտահայտվում Ռուսաստանի հնարավոր զիջումներին և երկարող պատերազմական իրադարձությունների շուրջ առաջարկում էր հումանիզմից դրդված մոտեցումներ. «Ամբողջ աշխարհի ուշադրութիւնը շարունակում է գրաւուած մնալ Հեռաւոր Արևելքով, ուր երկու խոշոր պետութիւնների՝ Ռուսաստանի և Ճապոնիայի ռազմական ոյժերը ծայրահեղ ճիգերով զարկում են իրար Խաղաղ Ովկիանոսի արևելքին, մանջուրական դաշտերում ու լեռներում համարեա ամենայն օր մարդկային արիւնը հոսում է, երկու կողմից հազարաւոր կէանքեր քաղում են պատերազմի անողոք Աստու ձեռքով և դժո-

¹ «Մուրճ». Քաղաքական, հասարակական, գրական ամսագիր, 1904, N 4, էջ 185-186:

² Նույն տեղում, էջ 187:

³ Նույն տեղում, 1904, N 5, էջ 198:

ւար է թէկուզ մօտաւոր ձևով ասել, թէ ուր է հաւանական վախճանը այս հսկայական մենամարտի»¹:

Դեղին ծովում և Կորեական նեղուցում ռուսական նավատորմի պարտությունը և Լուոյանգում անհաջող ճակատամարտը վերջնական դարձրին «Մուրճ»-ի վերաբերմունքը պատերազմի ելքի շուրջ: Մեկնաբանելով ճապոնացիների դեմ ռուսական վճռական գործողությունները, ծովային առճակատման մեջ նրանց հաջողությունները՝ հանդեսը գրում է. «Պորտ-Արտուրի քաջ պաշտպանները շարունակում են օրհասական դիմադրություն ցոյց տալ ճապոնացիներին: Վերջին տեղեկություններին նայած՝ ճապոնացիները սեպտեմբերի 6-ից սկսած կարողացել են մի քանի նշանաւոր ամրություններ ևս գրաւել և աւելի սերտ դարձնել պաշարումը: Այդ պայմաններում հազիւ թէ կարողանայ Պորտ-Արտուրը կանգուն մնալ մինչև բալտիկեան էսկադրայի ժամանումը»²:

«Մուրճ»-ն իր վերաբերմունքն է արտահայտում պատերազմական զարգացումների շուրջ վկայակոչելով, որ սանձարձակ բռնության պայմաններում անօգուտ է միջազգային իրավունքի փողահարումը, քանի որ պատերազմը փաստացի մերժում է այդ իրավունքը. «Պատերազմով միջազգային հարցեր լուծելու բարբարոս միջոցի դեմ թէև խօսում է կուլտուրական մարդկությունը, բայց դեռ մեծ պետություններից ոչ մէկը չփորձեց կանգնեցնել ներկայ զարհուրելի արհինահեղությունը»³:

Պորտ-Արտուրի կապիտուլացիան, ինչպէս հավաստում է «Մուրճ»-ը, դարձավ ևս մեկ փաստարկ՝ հօգուտ խաղաղության շուտափույթ հաստատման: 1904-ի դեկտեմբերի 20-ին (1905 թ. հունվարի 2-ին), պատերազմը սկսվելուց հետո 329-րդ օրը, ամրոցը հանձնվեց ճապոնացիներին: 1904 թ-ի օգոստոսին Պորտ-Արտուրի շրջափակումը վկայեց, որ մեկ գրոհով ամրոցը վերցնելն անհնար էր: Ամրոցն ընդունեց 6 գրոհ և միայն հանձնվեց 1904 թ-ի դեկտեմբերին՝ գեներալ Ա. Ստեսելյայի դավաճանության հետևանքով⁴: «Ութ ամսուայ պաշարումից յետոյ, - գրում է «Մուրճ»-ը, - դեկտեմբերի 20-ին ընկաւ Պորտ-Արտուրը գեներալ Նոգիի յամառ և սիստեմատիկ հարուածների տակ: Յաղթող ճապոնացին ոչ առաջին անգամ ասպետական վերհանձնութիւն ցոյց տուաւ իր քաջ ախոյեանին: ...Եւ այսպէս ընկաւ այն ամրութիւնը, որ տասը տարի շարունակ կռուախնձոր էր դառել Հեռաւոր Արևելքում»⁵:

¹ «Մուրճ». Քաղաքական, հասարակական, գրական ամսագիր, 1904, N 7, էջ 149:

² Նույն տեղում, 1904, N 9, էջ 134:

³ Նույն տեղում, 1904, N 11, էջ 189:

⁴ Орлов А., Георгиев В., Георгиева Н., Сивохина Т., История России, стр. 313.

⁵ «Մուրճ». Քաղաքական, հասարակական, գրական ամսագիր, 1905, N 1, էջ 171:

Հետաքրքրական է հասարակական կարծիքի վերաբերմունքը Պորտ Արթուրի կապիտուլացիայի նկատմամբ: Ինչպես նշում է ամսագիրը, գիտակից հասարակության լավագույն ներկայացուցիչները շատ լուրջ վերաբերվեցին հարցին և քաջություն ունեցան առանց հուսահատական կամ կեղծ հայրենասիրական աղաղակների պարզել «ցաւալի երևոյթի նշանակութիւնը»¹:

Պատերազմը հնարավորություն տվեց լիովին պարզել Ռուսաստանի ակնհայտ հետամնացությունը ոչ միայն առաջատար տերություններից, այլև պետությունից (Ճապոնիայից), որը համեմատաբար վերջերս էր գնացել լայնածավալ վերափոխումների ճանապարհով: Ճապոնիան հաղթեց Ռուսաստանին ոչ թե իր բնակչության մեծ տաղանդի, այլ՝ ներքին ազատության, ավելի լավ քաղաքական կարգերի, ավելի արդյունավետ և հաջող բարեփոխումների պատճառով:

Ռազմաճակատի ձախողումների ազդեցության տակ «Մուրճը» սաստկացրեց նաև Ռուսաստանի նախապատերազմյան արտաքին քաղաքականության քննադատությունը: Ճապոնիայի հետ ճակատագրական բախումը ոչ միայն ցույց տվեց ներքին դիվանագիտության ծանրությունը, ամբարտավանությունն ու վերահսկողության բացակայությունը, այլև բացահայտեց քաղաքական մեքենայի համակարգային թերությունները: Ակնհայտ է, որ 1905 թվականի գարնանը «Մուրճը» վերանայել էր Հեռավոր Արևելքում հակամարտության պատճառների վերաբերյալ իր նախկին գնահատականները. «Մուկդենը ընկաւ: Կատարուեց Հեռուոր-Արևելքի պատմութեան մէջ դարագլուխ կազմող անցքերից մէկը: Այն ահեղ ճակամատամարտը, որ տևում էր 14 օր և որին մասնակցում էին մօտ 850 հազար մարտիկներ, վճռուեց յօգուտ ճապոնացիների: Կուրոպատկինը զրկուեց իր բանակի 1/3-ից: Կուրոպատկինը հրաժարեցրուեց հրամանատարութիւնից և նրա տեղը նշանակուեց ծերունի գեներալ Լինեվիչը»²: Ինչպես նշում է հոդվածագիրը՝ «կը վճռվի հաշտութեան հարցը, և խաղաղութիւնը կը վերականգնուի ի մեծ ուրախութիւն ռուս հասարակութեան լաւագոյն մասի, որ ներքին խոշոր ռեֆորմներին աւելի մեծ նշանակութիւն է տալիս, քան այսուհետև նոյնիսկ յաղթութեան հեռուոր Մանջուրիայում կամ Խաղաղ Ովկեանոսի ջրերում»³:

Պորտ Արթուրի կապիտուլացիայից հետո ամսագիրը սկսեց հետևողականորեն պաշտպանել խաղաղության կնքման գիծը՝ գիտակցելով, որ այդ ցանկությունները կարող են չհամընկնել Ճապոնիայի հաղթանակի

¹ Նույն տեղում, էջ 171-172:

² Նույն տեղում, 1905, N 4, էջ 236:

³ Նույն տեղում, էջ 237:

ծրագրերի հետ: «Մուրճը» վրդովված էր աջակողմյան հրապարակումների կոչերից՝ շարունակել պատերազմը մինչև հաղթական ավարտ: «Կորեան նեղուցում, Յուսիմա կղզու մօտ, կատարուեց այն սուկալի կատաստրոֆը, որին լարուած ուշադրութեամբ սպասում էր ամբողջ աշխարհը: Մայիսի 14-15-ին Տոգոս բնաջինջ արաւ ռուսաց երկրորդ խաղաղովկեանեան նաւատորմիդը... Այդպիսի ողբերագական վախճան ունեցաւ անկոնտրոլ, անպատասխանատու և կաշառուող ռուս բիրոկրատիայի պատրաստած նաւատորմիդը, որ գոռոզ էր թղթի վրայ և ոչ իրականութեան մէջ: Այդ սուկալի չարիքի մէջ էլ լաւատես մարդիկ, իհարկէ, բարիք էլ կը գտնեն. բարիքն այն է, որ խաղաղութիւն կնքելը դառաւ անհրաժեշտութիւն Ռուսաստանի համար, որովհետև նաւատորմիդի անկարելի է յաղթել Ճապոնիային: Միւս բարիքը կը լինի այն, որ բիրոկրատիայի իշխանութեան վերջ կը դրուի և Ռուսաստանի ներքին վերանորոգութեան հարցը կը դառնայ անյետաձգելի մի գործ»¹:

Յուսիմայի ճակատամարտի անհաջող ելքից հետո «Մուրճ»-ը կարծիք էր հայտնում, որ Ռուսաստանը ստիպված է ձգտել խաղաղության՝ ճանաչելով հակառակորդի՝ լիակատար հաղթողի իրավունքը: «Յունիսի 14-ին ճապոնացիները, համարեա առանց ընդդիմութիւն գտնելու ռուսների կողմից, գրաւեցին Մախալին կղզու հարաւային ամր... Այն ժամանակ Վլադիվոստոկը հիւսիսից կտրուած կըլինի Սիբիրիայի միւս մասերից: Միաժամանակ ճապոնացիները սկսել են գործողութիւններ Վլադիվոստոկի հարաւային կողմից, Կորէական սահմաններից»²:

«Մուրճը» բավկանությամբ ընդունեց Պորտսմուտի խաղաղության պայմանագրի կնքման լուրը: Չնայած ազդեցիկ կողմի առկայությանը, որը դեմ էր ճապոնիայի հետ համաձայնագրին, խաղաղ բանակցություններն ավարտվեցին ռուսական դիվանագիտության «փայլուն հաջողությամբ», որը կորցրած արշավի պայմաններում հասավ առավելագույն հաջողության: «Խաղաղութեան մասին բանակցելու համար Ռուսաստանի կողմից լիազօր է նշանակուած Ս.Ի. Վիտտե, որ խաղաղասէր կուսակցութեան ներկայացուցիչ է համարուած: Մաքառող երկու պետութիւնների լիազօրները Վաշինգտոնում պէտք է սկսեն խաղաղութեան կնքելու բանակցութիւնները... Այսպիսով, մինչ կը սկսուեն խաղաղութեան վերաբերեալ բանակցութիւնները՝ Վաշինգտոնում՝ գուցէ արդէն պաշարուած լինի Վլադիվոստոկը»³:

¹ Նույն տեղում, 1905, N 6, էջ 181-182:

² Նույն տեղում, 1905, N 7, էջ 156-157:

³ Նույն տեղում:

Հակամարտության երկար սպասված ավարտը, ըստ ամսագրի, պետք է հանդիսանա երկրի քաղաքական նորացման սկիզբ, որն ի վիճակի կլինի ապահովել պետական և հանրային շահերի իրական պաշտպանություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ակնհայտ է, որ «Մուրճ» ամսագրում հանգամանալից անդրադարձներ կան ռուս-ճապոնական պատերազմի ընթացքի, հակամարտության պատճառների ու ճգնաժամի առաջացման, ծավալման, ռազմագործողություններին: Պատերազմի լուսաբանման և արդյունքների ակնկալման հարցում պարբերականի դիրքորոշումների աստիճանական փոփոխությունը նկատելի է: Նախքան հակամարտության բռնկումը՝ «Մուրճը» կոչ էր անում խաղաղ ճանապարհով լուծել ռուս-ճապոնական հակասությունները, առաջարկում առկա խնդիրները լուծել դիվանագիտական մեխանիզմների կիրառմամբ, իսկ պատերազմի բռնկման հետ մեկտեղ «Մուրճ» ամսագիրն իրականում համերաշխություն հայտնեց պատերազմի վարման պաշտոնական գծին: Ռուսաստանը դիտվում էր որպես ճապոնական ագրեսիայի խաղաղ գոհ, իսկ ներքին դիվանագիտության թույլ տված սխալները գրեթե չէին շոշոփվում: Հարկ է նաև ընդգծել, որ չնայած խաղաղության կոչերին և ճապոնիայի հետ հակամարտության անիմաստ լինելու մասին հայտարարություններին, ամսագրի հոդվածագիրները ի սկզբանե վստահ էին ռուսական զենքի վերջնական հաղթանակին և քննադատում էին զիջումների և խաղաղության մարտավարության կողմնակիցներին:

Հետագայում, կապված ռուսական բանակի անհաջող ռազմարշավի հետ, «Մուրճ»-ն աստիճանաբար աճող դճգոհությունը բացատրում էր գոյություն ունեցող պետական համակարգի անկատարությամբ, որը լուրջ սխալներ էր թույլ տվել ինչպես հեռավորարևելյան քաղաքականության, այնպես էլ զինված ուժերի և տեխնիկական միջոցների արդիականացման հարցում: Մուկդենի տակ կրած պարտությունից և Պորտ Արտուրի հանձնումից հետո ամսագիրն առաջարկում էր դադարեցնել պատերազմը և շուտափույթ խաղաղություն կնքել: Զարմանալի չէ, որ Պորտսմուդյան համաձայնագրի ստորագրումը դրականորեն ընդունվեց «Մուրճ»-ի կողմից և ձեռք բերված համաձայնությունը գնահատվեց որպես «անհրաժեշտությին»:

Կարելի է փաստել, որ ինչպես ռուսական, այնպես էլ կովկասահայ մամուլն՝ ի դեմս «Մուրճ» ամսագրի հետևողականորեն լուսաբանում էր

պատերազմական զարգացումները, փորձում էր փոքրիշատե անդրադառնալ միջազգային իրադրության ծավալմանը, զարգացումների հնարավոր սցենարներին: Ելնելով իշխանության և պատերազմի մասին ավանդական պատկերացումներից կովկասահայությունն առավել պահպանողական վերաբերմունք էր դրսևորում պատերազմի նկատմամբ: Այնամենայնիվ, Հեռավոր Արևելքում ռուսական կողմի պարտությունը զգալի ազդեցություն ունեցավ կովկասահայ հասարակական շրջանակների քաղաքական գիտակցության վրա, իսկ «Մուրճ» ամսագիրը դարձավ քաղաքական ինքնագիտակցության ձևավորման կարևոր օղակ:

Владимир Погосян, Отзывы русско-японской войны в журнале "Мурч"

- Русско-японская война 1904–1905 годов - важная страница не только в истории России, но и в жизни кавказских армян. Он выкристаллизовал революционные процессы внутри страны, повлиял на формирование военно-политических систем в Европе. Русско-японская война 1904-1905 гг., вообще любая военная ситуация, определяет отношение общества к процессам, инициированным государством, выявляет возможности внутренних кризисов, трансформации эмоционального потенциала общества. Во время русско-японской войны не только были заметны военно-политические процессы, но и существовала перспектива революционной ситуации в стране. Такой жизненный опыт российское общество имело не только в годы русско-японской войны, но и в годы Первой мировой войны, Афганской войны, когда затяжные, часто непонятные военные действия не имели положительного общественного резонанса, и этот разрыв в итоге привел к падению режимов.

Война была воспринята кавказскими армянами неоднозначно. Кавказско-армянская пресса представила российско-японскую войну с разных сторон, но преобладало официальное восприятие, особенно консервативно-либеральные слои, которые с большой болью восприняли амбиции российских войск. Темы, связанные с довоенным политическим развитием, ходом русско-японской войны и боевыми действиями, широко освещались в номерах журнала "Мурч". Журнал не только широко освещает военно-политические события, но и дает подробную картину боевых действий с точки зрения изучения отдельных военных операций русско-японской войны.

Vladimir Poghosyan - Reviews of Russo-Japanese War in the magazine "Murch" - The Russo-Japanese War of 1904-1905 is a significant page not only in the history of Russia, but also in the life of Caucasian Armenians. It

crystallized the revolutionary processes inside the country, influenced the formation of military-political systems in Europe. The Russo-Japanese War of 1904-1905, in general, any war situation determines the attitude of the society towards the processes initiated by the state, reveals the possibilities of internal crises, transformation of the emotional potential of the society. During the Russo-Japanese war, not only were the military-political processes noticeable, but there was also a prospect of a revolutionary situation in the country. The Russian society had such a life experience not only during the Russo-Japanese war, but also during the First World War, the Afghan war, when the protracted, often incomprehensible military operations did not have a positive public response, and this rupture eventually led to the fall of regimes.

The war was accepted ambiguously among the Armenians of the Caucasus. The Caucasian-Armenian press presented the Russian-Japanese war from different angles, but the official perception was predominant, especially the conservative-liberal layers, which perceived the ambitions of the Russian armies with deep pain. Topics related to the pre-war political developments, the course of the Russo-Japanese war, and military operations were widely covered in the issues of "Murch" magazine. The magazine not only extensively covers military-political developments, but also provides a detailed picture of the military operations from the point of view of the study of certain military operations of the Russo-Japanese war.

Ուղարկվել է խմբագրություն 13.06.2022թ.

Գրախոսվել է 16.06.2022թ.

Ստորագրվել է տպագրության 20.06.2022 թ.